

ԵՐԿՐԱՐԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
ՍՄԿՊ XXII ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՏԱԿ

Սովետական Հայաստանի երկրաբանները սովետական ողջ ժողովրդի հետ միասին մեծ գոհունակությամբ ընդունեցին ՍՄԿՊ XXII համագումարի պատմական որոշումները: Պարտիայի Մրադրում առաջին անգամ մարդկության պատմության մեջ մշակված է կոմունիստական հասարակության կառուցման դիտականորեն հիմնավորված պլան, բացված են հողևոր և նյութական հարստությունների զարգացման համար անսահման հեռանկարներ, մարդու բարօրության համար:

Կոմունիզմի նյութական բազայի ստեղծման դործում նշանակալից է հանքային հումքի դերը: Դրա համար, առաջին հերթին պետք է ուսումնասիրվեն և յուրացվեն այն հանքավայրերը, որոնց շահագործումը տնտեսապես ավելի ձեռնտու է: Երկրաբանների խնդիրն է, ոչ միայն բավարարել հանքային հումքի ժողովրդական տնտեսության պահանջները, այլև անել ամեն ինչ հումքի պաշարների ստեղծման համար, որն ապահովի կոմունիստական հասարակարգի ժողովրդական տնտեսության աճող տեմպերը:

Մեկ տասնամյակ առաջ ճիշտ պլանավորում կատարելու համար Հայկական ՍՍՌ-ի երկրաբանները պետք է լավ պատկերացնեն ռեսուրսիկայի առանձին հանքային շրջանների հեռանկարային հնարավորությունները, և ամենից առաջ մշակեն խորը գիտական կանխատեսումներ, դրանց հիման վրա ճիշտ կողմնորոշեն որոնողա-հետազոտական աշխատանքները:

Առաջվա նման, որպես գիտական կարևոր խնդիրներից մեկը մնում է ռեսուրսիկայի օգտակար հանածոների հանքավայրերի տեղաբաշխման օրինաչափությունների մշակումը, սերտ կապված երկրաբանական կառուցվածքի առանձնահատկությունների հետ: Այժմ արդեն բավարար չէ հանքային գոտիների առանձնացումն իրենց յուրահատուկ հանքանյութային պղինձ-կոլչեդանային Ալավերդի—Ղափան գոտու սահմաններում, պղինձ-մոլիբդենային Փամբակ—Սյունիքի գոտում և քրոմիտային ու ոսկու Սևանի գոտու համար: Անհրաժեշտ է յուրաքանչյուր գոտու մանրամասն ուսումնասիրությունը և նրանց սահմաններում արդյունաբերական տեսակետից առավել հեռանկարային տեղամասերի առանձնացումը: Մեծ ուշադրություն պետք է դարձնել այն հատկանիշների կոմպլեքսին, որոնցով հնարավոր է պարզել հենց «իրեն» հանքանյութային գոյությունը և նրա հետամտումը դեպի խորը հորիզոնները:

Հանքավայրերի հեռանկարների գնահատման ժամանակ, չպետք է անուշադրության մատնել այն հանդամանքը, որ հետախույզական աշխատանքները նրանցում հազիվ թե հասնում են 300—500 մ խորության, իսկ ավելի խորը հորիզոնները, որոնք մի շարք դեպքերում ավելի հարուստ են վերիններից, դեռևս ուսումնասիրված չեն: Պղնձի կոլչեդանային, երկաթահանքային և ոսկու հանքավայրերում խորը հորիզոնների հետախույզությունն արդեն տվել է դրական մեծ էֆեկտ:

Լայն կիրառում պետք է ստանան որոնման գեոքիմիական մեթոդները,

որոնք թույլ կտան առանձնացնել ինտրուզիվ կոմպլեքսներ յուրահատուկ հանքաբերության, և որոնման հիդրո-քիմիական մեթոդները՝ սահմանագծեն հեռանկարային տեղամասեր:

Վերջապես, հանքային հումքի կազմի մանրամասն ուսումնասիրությունը հնարավորություն կտա ավելի խորը թափանցել նրա կառուցվածքի մանրամասնությունների մեջ և ավելի լրիվ ու կոմպլեքս ձևով օգտագործել նրա բոլոր արժեքավոր բաղկացուցիչ մասերը:

Հայաստանի մետաղային և ոչ մետաղային հանքավայրերի ճնշող մեծամասնությունը գենետիկորեն և տարածականորեն կապված է տարբեր հասակի մագմատիկ ֆորմացիաների հետ: Դրա համար, ռեսպուբլիկայի ինտրուզիվ զանգվածների և հրաբխածին առաջացումների մանրամասն և խորն ուսումնասիրությունը, ժամանակակից նորագույն պետրոգրաֆա-միներոլոգիական, գեոքիմիական և ռադիոլոգիական մեթոդների կիրառմամբ, հանդիսանում է Հայաստանի երկրաբանության կարևորագույն խնդիրներից մեկը և ունի գիտատեսական և գործնական մեծ նշանակություն:

Ռեսպուբլիկայի ընդերքում օգտակար հանածոների տեղաբաշխման օրինաչափությունները պարզաբանելու գործում առաջնակարգ նշանակություն ունեն նոր մեթոդներով ռեգիոնալ երկրաբանական հետազոտությունները: Ավելի մեծ ծավալ պետք է ստանան ստրատիգրաֆիական, տեկտոնական, պալեոերկրաբանական և լիթոլոգիական ուսումնասիրությունները, որոնց տվյալները հիմք են հանդիսանալու մետալոգենիական և հեռանկարային քարտեզներ կազմելու համար: Հատուկ ուշադրության արժանի են խորքային բեկվածքների ավելի մանրազնին ուսումնասիրությունները, որոնց հետ գենետիկորեն կապված են ինտրուզիվ մարմինները և մետաղային օգտակար հանածոները: Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել ապարների ֆորմացիաների ուսումնասիրության վրա, որոնք առաջանում են որոշակի գեոտեկտոնական պայմաններում և պարունակում են որոշակի տիպի օգտակար հանածոներ:

Առանձին ստրուկտուրո-ֆացիալ զոնաներում, տարբեր տիպերի մագմատիկ ապարների ճիշտ հասակային որոշումը, հնարավորություն կտա բազմակողմանիորեն լուսաբանել մագմատիզմի արմատական հարցերը՝ առանձին ինտրուզիվ կոմպլեքսների առաջացման պայմանները կապված այդ մարզի ստրուկտուրայի զարգացման հետ, մագմայի էվոլյուցիան ժամանակի ընթացքում և նրա փոխադարձ կապը տեկտոնիկայի հետ, հանքայնացման տիպերի կապը մագմատիկական ֆորմացիաների հետ, մագմայի մետալոգենետիկ մասնագիտացման բնույթը և այլն:

Հայաստանում մի շարք բիոստրատիգրաֆիական լավ բնութագրված մագմատիկական առաջացումների առկայությունը հնարավորություն է տալիս ընդլայնել ուսումնասիրությունները նոր հենակետերի (րեպեր) մշակման նպատակով, երկրաժամանակագրական «աղյուսակը» սիստեմատիկորեն ճշտելու և նոր տվյալներով հարստացնելու համար:

Հայաստանի երկրաբանական զարգացման պատմության մեջ էական նշանակություն են ունեցել հրաբխային պրոցեսները, որոնք երևան են եկել տարբեր երկրաբանական էպոխաներում, սկսած պալեոզոյից մինչև չորրորդական շրջանը ներառյալ:

Միայն պիո-պլեյստոցենյան հրաբխային առաջացումներն այժմ ծածկում են ռեսպուբլիկայի տերիտորիայի ամբողջ տարածության $2/3$ -ը:

Հրաբխային երևակումների տիպերի բազմազանությունը, արտավիժման կենտրոնների մորֆոլոգիայի և նրանց առաջացումների լավ պահպանվածությունը, հնարավորություն են տալիս Հայաստանը դասել աշխարհի կլասիկ հրաբխային շրջանների շարքը, որտեղ կարելի է կատարել բազմակողմանի հրաբխագիտական ուսումնասիրություններ: Այդ տեսակետից, ՍՍՌՄ-ի սահմաններում, Հայաստանը կարող է զիճել միայն Կամչատկային, որտեղ գիտումները կատարվում են գործող հրաբուխների վրա:

Վերջին տարիներս սովետական երկրաբանական գիտության կողմից մշակվող պրոբլեմների թվում առանձնապես մեծ նշանակություն է ստանում երկրի կեղևի խորը շերտերի և երկրի մանտիայի ուսումնասիրությունը: Այս կապակցությամբ հրաբխային առաջացումների ուսումնասիրությունը, որպես խորքային նյութի ցուցիչներ, ձեռք է բերում ավելի կարևոր նշանակություն:

Հայաստանի հրաբխային առաջացումների ուսումնասիրության անհրաժեշտությունը բխում է և ուղղակի պրակտիկ խնդիրներից: Չնայած հրաբխային առաջացումների շատ տեսակների տարբեր ձևի և յուրահատուկ բնույթի տուֆերի և տուֆոլավանների, հրաբխային խարամների, ավազների և մոխրի օդադործմանը շինարարության մեջ, վերջին տարիներս լայն հնարավորություններ են ստեղծվում այդ նյութերը կիրառել որպես ոչ մետաղային տեխնոլոգիական հումք: Ներկայումս ժողովրդական տնտեսության ամենատարբեր բնագավառներում մեծ նշանակություն է ձեռք բերում ջրապարունակ հրաբխային ապակին — ալեխտը, որոնց պաշարները Հայաստանում պրակտիկորեն անսպառ են:

Հայկական ՍՍՌ ժողովրդական տնտեսության հատկապես գյուղատնտեսության հետագա վերելքի համար կարևոր նշանակություն ունի ռեսպուբլիկայի բնության կոմպլեքսային ուսումնասիրությունը: Այդ հնարավորություն կտա լուծելու ոչ միայն ժողովրդատնտեսական կարևոր գործնական խնդիրներ, այլև մշակելու լեռնային երկրների բնական լանդշաֆտների զարգացման օրինաչափություններին վերաբերվող տեսական հարցեր:

Հայկական ՍՍՌ-ի տերիտորիայում սողանքային պրոցեսների լայն զարգացումը և ժողովրդական տնտեսությանը նրա հասցրած մեծ վնասը, հիմք են տալիս լայնորեն ուսումնասիրել այդ երևույթները:

Երկրաբանական ինստիտուտի ինժեներային երկրաբանության և գրունտների մեխանիկայի սեկտորում ուսումնասիրվում են սողանքային պրոցեսները, որպես լանջերի կայունության ընդհանուր պրոբլեմի մի մասը:

Սողանքային երևույթների և լանջի կայունության բազմամյա ուսումնասիրությունները թույլ են տվել պրոֆեսոր Գ. Տեր-Ստեփանյանին մշակել սողանքային երևույթների թեորիան և առանձնացվել է այդ պրոցեսի նախապատրաստական ստադիան՝ լանջի խորքային սողունությունը:

Հողային զանգվածների դանդաղ տեղաշարժումը, որը կոչվում է լանջի սողանություն, իրենից ներկայացնում է լանջերում ծանրության ուժի հետևանքով շարժման յուրահատուկ ձև:

Տվյալ թեմատիկայով մոտակա տարիներում նախատեսվում է կատարել հետևյալ աշխատանքները.

1. Հայկական ՍՍՌ-ի սողանքային շրջանների հայտնաբերումը, նրանց քարտեզագրումը և մանրամասն ուսումնասիրությունը:

2. Սողանքային տեղամասերում ստացիոնար դիտարկումների կազմակերպումը, ժամանակին սողանքային երևույթների կանխատեսման և նրանց ակտի-

վացման մասշտաբների, հակասողանքային միջոցառումների ընտրման ու կիրառման նպատակով:

3. Հայաստանի սողանքների և սողանքային կառուցվածքների դասակարգումը:

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի գրուտների մեխանիկայի լաբորատորիայում, կատարվում է գրունտների ֆիզիկո-մեխանիկական հատկությունների բազմակողմանի ուսումնասիրություն, նորագույն մեթոդներով: Կավային գրունտների վարնետի դիմադրողականության որոշման համար նախագծված է օղակաձև սարք:

Այդ սարքը հնարավորություն է տալիս կատարել գրունտների փորձարկում դեֆորմացիայի և ճնշման ստուգման պայմաններում, ուսումնասիրել ջերմաստիճանի ազդեցությունը և այլն:

Հայաստանի տերիտորիայի 80 տոկոսից ավելին ծածկված լինելով բազալտներով և հրաբխային ծագման ապարներով, դժվարացնում է մագնիտային հետախուզության և սեյսմո-հետախուզության մեթոդների կիրառումը: Այդ կապակցությամբ նախատեսվում է մշակել սեյսմո-հետախուզության մեթոդիկա, հատուկ հորատանցքերի միջոցով բազալտային և լավային կեղևի տակ պայթեցումներ կատարելու հիման վրա:

Դրա հետ մեկտեղ կշարունակվեն և կընդլայնվեն պալեոմագնիսական ուսումնասիրությունները, որի համար Հայաստանն ունի բացառիկ բարենպաստ պայմաններ: Մեծ ուշադրություն է դարձվում երկրի կեղևի նորագույն տեկտոնական շարժումներին:

Այդ նպատակների համար կատարվում են հատուկ սխտեմատիկ հարթաչափային և եռանկյունաչափական աշխատանքներ, որոշակի պլանով: Սեյսմոլոգիայի բնագավառում բավականաչափ ընդլայնում են և կատարելագործվում թույլ և ուժեղ երկրաշարժերի սեյսմոգրամների և ակսելոգրամների սպեկտրալ անալիզների մեթոդները, որոնք կարևոր նշանակություն ունեն ինչպես երկրի կեղևի խորը մասերի ուսումնասիրման մեթոդիկայի, այնպես էլ ինժեներո-սեյսմոլոգիական հետազոտությունների համար:

Լուրջ ուշադրություն է դարձվում գեոֆիզիկական ուսումնասիրությունների նոր մեթոդների և միջոցների մշակմանը:

Այդ նպատակով մշակվում են շափող գործիքների նոր տեսակներ: Գեոֆիզիկական ուսումնասիրությունների համար Լենինական քաղաքից 5 կմ հեռու նախատեսվում է կառուցել ոչ մեծ, բայց լավ ապահովված ստացիոնար գեոֆիզիկական դիտարան, երկրի կեղևի բոլոր ֆիզիկական դաշտերի կոմպլեքսային ուսումնասիրության համար: Այն կազմված կլինի առանձին տաղավարներից՝ մագնիսական, գրավիտացիոն, սեյսմիկ դաշտերի, ինչպես նաև թելուրային հոսանքների ուսումնասիրման համար:

Տաղավարներից մեկում տեղավորված կլինի լեռնային ապարների ֆիզիկական հատկությունների ուսումնասիրման լաբորատորիան:

Բացի դրանից կկազմակերպվի շարժական գեոֆիզիկական կայան, զանազան տեղերում կարճատև գեոֆիզիկական ուսումնասիրությունների համար:

Կասկած չկա, որ Հայաստանի երկրաբանները չեն խնայի իրենց ուժերը պարտիայի և կառավարության առաջադրված խնդիրները հաջող կատարելու համար և իրենց արժանի լուման կներդնեն կոմունիզմի կառուցման գործում: